

**ՀԱՅԻ ՈԳՈՒ ՀԵՏԵՂԵՌՆԱՅԱՆ ԿԵՆՍՍՇԱՐԺԸ
ՀԱԿՈՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ «ԿԱՊՈՒՅՏ ՀԱՁ» ԳՐԲՈՒՄ**

Անտարակույս, մարմնից ծնվածը մարմին է, ոգուց ծնվածը՝ ոգի, բայց տիեզերականը մարմնի ոգեղենությունն է երկնքում և հոգու մարմնացումը երկրի վրա: Դրա համար էլ հայրենիքը լույս է դառնում, երբ երկնում են երկինքն ու երկիրը, երբ ճառագում է գիրքը:

Հակոբ Հարությունի «Կապույտ հագ» գիրքը՝ հայի հավաքական ոգու տեսլականով, առկա պատմությունն չէ, այլ ոգու սլացք՝ անցյալով ապագան իմաստավորող: Ըստ էության, գրքի գլխավոր կերպարը հայի ոգին է, մյուս կերպարները՝ ոգեկիրներ:

Հանիրավի, մարդկության գոհաբերվող տեսակ են շարունակ մեզ համարել. «Կապույտ հագը» եկել է մեզ ասելու, որ պետք է թոթափենք այդ մտայնությունը. *հայի ոգին անպարտելի է ու հարամնա:*

Հ. Հարությունի «Կապույտ հագը» ուշագրավ է մի քանի չափումներով. նախ՝ որպես գրողի ստեղծագործական հնարավորությունների ժանրային նոր դրսևորում: Դժվար է միանշանակ տարորոշել՝ վեպ է, վիպակ է, պատմվածաշար, թե արձակի փոքր ժանրերի /պատմվածք, նովել, խռիագրություն, ավանդազրույց, հրապարակախոսական ակնարկ, հուշագրություն/ խառնարան, քանի որ նրանում տեղ գտած պատումներն ունեն հարաբերական ինքնավարություն: Առանց որևէ ժանրի նախապատվության՝ գիրքը կարելի է բնութագրել՝ պատում պատումի մեջ: Այն, որ հեղինակը պատմողի տարերք ունի, անժխտելի է, և վիպելու, պատմելու ընթացքում բառերից անդին ոգին է, որ առաջնորդում է նրան:

Հակոբ Հարությունը, լինելով անապատով անցած սերնդի ժառանգ, արյան հիշողությամբ ու մարտունակ զինվորի պիրկ մկաններով է շարժել իր գրիչը, և գրքում հայտածել հայ կամավորական լեգեոնականի կերպարը, որը հանիրավի մոռացության էր տրված: Այս կերպարի գեղարվեստական անդրադարձը կարևորվում է նաև այն իրողությամբ, որ այսօր համայն հայությունը նշում է Մեծ եղեռնի հարյուրամյակը: Հայ լեգեոնականը Առաջին համաշխարհայինի հաղթող զինվորներից է, իսկ եղեռնից հետո, ըստ էության, առաջին վրիժառուներից մեկը, քանի որ, ըստ նրա, չդատապարտված ռժիրը կարող է լինել շարունակական:

Գրքում անցյալը արժանապատվորեն հառնում է մեր ժամանակի մեջ, որը թույլ է տալիս ավելի լավ ճանաչել հայի ինքնությունը, ըմբռնել հայ զինվորի հոգեկարգրի առանձնահատկությունները հատկապես սահմանային իրավիճակներում:

«Կապույտ հագ»-ում տարբեր ժամանակների հերոսները հայտնվում են նույն հարցադրումների մոզական շրջանակում, հարցադրումներ, որոնց լուծման միակ երաշխիքը մնում է հայի ոգու կենսաշարժը: Եթե գրքի գլխավոր հերոսը անցյալ դարի սկզբին Կիլիկիան ազատագրող լեգեոնական Ղազարն է, ապա մեր

օրերում Արցախի սահմաններում ամուր կանգնած նրա ծոռ Մանուկն է: Գիրքն արծարծում է նաև Եղեռն ապրած երրորդ սերնդի աշխարհաստեպայումն ու սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները, որոնք լայն ընդգրկմամբ համամարդկային հայեցակետեր են՝ հայակաճախության գեղարվեստական անդրադարձումով: 2. Հարությունը ազգային արժեքանության համատեքստում պատմական նյութը ոգեեմայորեն փոխակերպում է գեղարվեստականի, որով և ներկայացնում է հայ ժողովրդի ճակատագիրը:

Պատմական իրողությունն այսպիսին է՝ «1915թ. Դիարբեքիի վիլայեթի մեջ մտնող Չեքուշի հայ համայնքը տեղահանվեց և ամբողջովին կոտորվեց»:

Ղասաբյանների մեծ գերդաստանից կենդանի մնացած միակ շատավիրը պապս էր՝ Ղազարը»¹:

Շեղինակն արևելահայ գրականության մեջ առաջին անգամ գեղարվեստորեն լիարժեք անդրադարձել է կամավորական հայ լեզոնականին՝ իր Ղազար պապի կերպարին, որի կենսագրությունը դարձել է եղեռնագարկ գերդաստանի շարունակվող տարեգրություն: Մինչ այս գրքի լույսընծայումը հայ լեզոնականների մասին մասնակի անդրադարձ է եղել Ստ. Ալաջաջյանի «Եղեզները չխոնարհվեցին» գրքում /Մարաշի ռդերբության զանգվածային տեսարաններում/ և Կարպիս Սուրենյանի «Արարայի քահանան» պատմվածքի մեջ,² որտեղ քահանան Արարայի ճակատամարտի մասնակից է հայկական լեզոնի կազմում:

2. Հարությունի գրքում մանապարտ Ղազարը դառնում է այն կանաչ շիվը, որ անավոր ռդերբությունից հետո պետք է ծաղկեր ու սաղարթվեր՝ աչքը հառած պապենական Չեքուշի /այս առումով ուշագրավ է «Նիկողոսի աղոթքն առ կենաց ծառ» պատմվածք/:

Ղազար պապը հավերժ պայքարող հայի կերպար է, ինքնաժայթող, ինքնաճեղքվող կերպար, որից էլնում է Վահագնի կրակը, իսկական որդի որսուման: Նրա և հայկական լեզոնի կամավորների համար հաղթանակի բանաձևը աղոթքն է արդարության, իրավունքի, վրեժի... Վրեժի, որը նրանց ուղեկցեց ողջ կյանքում, մինչև իսկ այն ժամանակ, երբ դադարել էր զինավառ կռիվը, ու նրանց պայքարը աշխարհի դեմ, իրենց աղոթքին հավատարիմ, շատ գավակներ ունենալն էր: Այս գաղափարի առհավատչյան Ղազարի ծոռ Մանուկն է, որն այսօր էլ արցախյան սահմանին է որպես հայրենյաց դիրքապահ: Վեպում նրա՝ զինվորի երգման տեքստը նույնան աղավաճում նման ուղարկվում է կորուսյալ երկիր՝ Տիգրանակերտից Տիգրանակերտ:

Շեղինակը դիպուկ է բնութագրում Հայկական լեզոնը՝ «հայ բազկառուծի հավաք միասնություն, որը միշտ էլ թոփչք է եղել, քանզի այն ոգի էր, որ հառնել էր արյուն-քրտինքից ավելի քան 5000 հայորդիների, որոնք ուս ուսի, մեջք մեջքի տված հաստատեցին հայի՝ հայրենիք ունենալու բարոյական իրավունքը»:

Ի դեպ, լեզոնականների թեմայով արևմտահայ գրականության մեջ հայտնի է Ը.Շահնուրի «Պոլսուզլըները» /«Կոտուշակիրները»/ պատմվածքը, որը առաջին

¹ Հարություն 2, Կապույտ հազ, էր., 2014, էջ 15:

² Տե՛ս Սուրենյան Կ., Աբուրդդր /պատմվածքներ ու էսսեներ/, էր., 2010, էջ 275:

անգամ տպագրվել է Փարիզի «Մենք» հանդեսում 1932-ին: Արյան վրեժին գիտակից մնալ, թշնամու հետ վարվել այնպես, ինչպես ես է քեզ հետ վարվում. սա է Շահնուրի հայեցակետը: Ինքնություն պատմվածքի արժեք՝ ունեցող այս գործը Շահնուրի գրելիք «Որդիք որտե՞սան» վեպի նախամուտն էր լինելու: Ցավոք, այս վեպը ինչ-ինչ պատճառներով չգրվեց:³

Հակոբ Հարությունը «Կապույտ հագ» գրքում Շահնուրի պատմահայեցողությունը շարունակում է ետ ժամանակների աշխարհընկալմամբ: Ջարդի որևէ տեսարանի ուղղակի նկարագրություն չկա: Նա անդրադարձել է Մեծ եղեռնը վերապրողի հոգեկարագրին ու մտախառնվածքի դրսևորումներին: «Գիշերները երա պայծառ աչքերում տեսիլքված ավերակների մեջ՝ շիրմաթմբերի վրա, հագաբավոր ծաղիկներ էին սկսում բացվել գույն-գույն, փունջ-փունջ:

«Քոյրերս ծաղկաւոր հագուստներ կը հագնէին,- անցավ Ղազարի մտքով ու շնչաց քույրերի անունները,- Մարի, Եղիս, Սոնա, Անի...»:

Չկան նրանք այլևս, Տուտանի խորքում ծաղկադաջվել են իրենց նահատակված մոր պատառոտված կրծքին:⁴

Պատմականությունը դրսևորվում է արդիականության հետ զիրկընդխառն: Ժամանակը ես չափվում է ոգեղենությամբ: Գրքի պատումներից յուրաքանչյուրը ճակատագրի, ոգու կենսաշարժի մի քայլ է առաջ, որն անցյալի, ներկայի և ապագայի հարափոփոխ ամբողջություն է: Բոլոր ժամանակները ներառելով՝ հեղինակը տալիս է այսօրվա ժամանակի պատասխանը՝ *Ես ունեմ իրավունք այս մասին խոսելու:*

Հայ զինվորի հավաքական ոգին՝ որպես արևագույն հայի ուրվական, ճախրում էր երգ դարձած... Արևագույն հայի ուրվականն է իրական գորավարը կայանալիք ճակատամարտի. անցնում է հոգուց հոգի հավաքականության խորհրդով, որ Արարա սլանալիս խոյանքը լինի անկասելի: Արևագույն հայի ուրվականը հեծել է Քուլիկի Ջալալին, որի սմբակների դոփյունից փխրվում է հողը, ոունգերից ցայտող բոցով կրակն շունչ տալիս կամավորների հոգիներին, լուսավորում Արարան, որ աննշմար բլուրը մեծանալով աշխարհի աչքին դառնա Արարատ:⁵

Հ. Հարությունը դրվագ առ դրվագ հզորացնում է գրքի խորհրդանշանների լեզուն՝ իբրև ազատության և հայ ինքնության կրող... Նորերդանիշները հայի ոգու կենսաշարժի յուրօրինակ դրսևորումներ են: Նա ուրույն ընկալմամբ է մեկնում Ազոավաքարի խորհուրդը՝ այն տեսնելով տապանաքարերի այլակերպումների մեջ, և գեղարվեստորեն ենթադրել տալիս, որ Մեերը դուրս է գալու մեր նախնյաց հիշատակներից՝ մեր ներսից, երբ որ մենք արժանի լինենք նախնյաց փառքին ...

Մետաֆոր-խորհրդանիշի իմաստ ունի գրքի «Կապույտ հագ» խորագիրը, որտեղ հազը մարդկային բողոքն է, ըմբոստացումն ու նաև հոգու ինքնամաքումը: Եվ բնավ պատահական չէ, որ անարդար աշխարհի դեմ ընդվզումը հերոսն

³ Միյոտրախայ դասական պատմվածք, Եր., 2007, էջ 288:

⁴ Հարություն Հ., նշվ. աշխ., էջ 32:

⁵ Նույն տեղում, էջ 43:

արտահայտում է հազով: Ընդհանրապես ժողովրդի մեջ ընդունված է կապույտ հազը բուժել հոգեհմայությունը անադարտ բնության միջնորդությամբ, ու թվում է, այս ենթատեքստում կապույտ հազը հայի ոգու ապաքինման առաքելություն ունի:

Գրքում Միջերկրական ծովը դեպ երազը տանող ճանապարհի խորհրդանիշ է. վերապրողների սերունդը թեև տարբեր ուղիություններով, բայց այդ ծովը կտրելով՝ գնում է դեպի Արարատ: Խորհրդանիշների համակարգում սիմվոլներից յուրաքանչյուրը՝ թզենին, ձիթենու տերևները, կենաց ծառը, Ջին մարտիկը, հայելին, այծի կաթը, Հովվի եկեղեցին և այլն, գաղտնագրում-գաղտնագրծում է հայկական ոգու այն ընթացքը, որն ասես մեր մեջ է գենետիկորեն: Ինքնակենսագրական այս գիրք-պատմումում հեղինակն իրեն զգում է նախահայրերի կծիկ. այդ կծիկի թելերը աստիճանաբար բացվում են և շերտ-շերտ հասնում պատմական այն ժամանակներին, երբ օրհասական խնդիր էր հայի լինել-չլինելը:

Գրքում հայ ոգու կենսաշարժի դրսևորումներում առանձնակի ուշադրություն է դարձվում *հայ կնոջ դերակատարմանը*: Լեզոնականի կինը զինակցուհի է, քույրը՝ մարե, մայրը՝ պահապան հրեշտակ: Ցավոք, մեր գրականության մեջ քիչ է անդրադարձվել հոգեհմա էակի՝ մարեի կերպարին: Մարեները, կարելի է ասել, թիկունքի քնարական հերոսներն են, որոնք իմաստավորել են հայրենյազ զինվորի առաքելությունը, նրան ոգեզարթոնքի կոչել: Գրքում Ղազարի մարեի պատմությունը որքան զեղեցիկ, այնքան եղերական է... Վկայաբերենք մի հատված, որի մեջ հասնում է նրա իմայատիպը. «Նամակդ ձեռքս առի ու աշխարհի լոյսը իջաւ վրաս: Երայտապարտ եմ, աղբա՛ր, որ դուն կաս ու ինձի հաղորդ կընես ան մեծ գործին, որու մահապարտն ես: Յիրաւի, ես քու մահապարտ եղած քայող եմ: Շես կրնայ երևակայիլ՝ որչափ հպարտ եմ քեզմով, որչափ երջանիկ, որ աղբարս կամատրական է:

Կը գրես. «Ես եմ ու վրէժս. այլ խոկում չունիմ»: Վրէժը հայրենիք կը պահէ»: Օ՛հ, հոգիդ մարտական է և ակաղձուն հիշողութիւններուդ բարութեամբ: Ինչ լավ կը գրես. «Չքուշի քարին վրայ դաջուած մնացած է սուրբ Մարգսի ձիուն պայտահետքը: Ու նագով աղջիկ մը՝ ծաղկահասակ ու նրբադալար՝ Սառա անունով, հոգուս վրայ նոյն հեքով կը հեւայ»: Միրտս կը ճմլուի Սառայիդ համար, որու զեզուն ձայնը կարծես ունկերումս մէջ է՝ «Տուտանին մէջ հաւիտեանս հարս կը մնամ»: Կը պատկերացնեմ՝ ինչպէս թնկապ աղաւնիի մը նման Սառան նետուած է Տուտանի վիհը».⁶

Ուշագրավ է, որ «Կապույտ հազը» պատասխանում է 21-րդ դարի գրականությանն ուղղված մարտահրավերներին նաև լեզվական իմաստով: Հեղինակի լեզվամտածողությունը, համապատասխան ոգեղեն կենսաշարժի, դրսևորվում է և արևելահայերենով, և արևմտահայերենով. արևմտահայերենով նա խոսում է ի սփյուռս աշխարհի ցրված իր հարազատների հետ: Լեզվական այլընտրանքը արդեն իսկ խորհրդանշում է մեր երկփեղկված ճակատագրի ֆենոմենը: Այն շահեկան է նաև գրական լեզվի երկու տարբերակների՝ արևելահայերենի և

արևմտահայերենի՝ լեզվական միջավայր ու կոլտրիտ ստեղծելու իմաստով, որն էլ ընդգծում է համայն հայության անբաժանելիությունը:

Գեղարվեստական պատումը լրացված է փաստագրական արժեքավոր նյութով: Հավելվածով: Այն միջաբերվել է որպես պատմական ֆոն, որն ընթերցողին հնարավորություն է տալիս պատկերացնելու պատմական այն ժամանակն ու միջավայրը, որոնց միջով անցել է հայ լեզեռնականը, անցել է և միշտ մնացել ասպետական պատվաստիճանով:

НЕСГИБАЕМЫЙ ДУХ АРМЯНИНА В КНИГЕ А. АРУТЮНА "СИНИЙ КАШЕЛЬ"

___ Резюме ___

___ Р. Оганесян ___

В книге "Синий кашель" А.Арутюн впервые в восточноармянской литературе художественно и полноценно представлен образ армянина легионера-добровольца национально-освободительного движения армянского народа, деда Казара, биография которого стала продолжением летописи его истребленной династии.

Основной образ книги – дух армянина, остальные образы, это носители этого духа. Воистину, армян считали жертвенным видом человечества. Книга "Синий кашель" призывает избавиться от этого стереотипа, поскольку армянский дух непоколебим и вечен.

Տեղեկություններ հեղինակի մասին

Հովհաննիսյան Ռոզա Պողոսի – ՀՀ ԳԱԱ Շիրակի
հայագիտական հետազոտությունների կենտրոն,
E-mail: vard-roza@mail.ru